

Յիրաւի ազգի մը շնորհակալիքը՝ աշխատաբեռն ճակտի հովանաւոր դափնին ներքն են։ Պ. Թիրեաքեան ներկայ բանասիրաց մէջ այս երախտանաց արժանաւոր ներքն կը հանդիսանայ։ Հեռունքը չպըրպըրենք, առջեւնիս է իր նորագոյն և դժուարին աշխատութիւնը, զոր կրնար ի գլուխ հանել պարսկերէնի ունեցած իր հմտութիւնը միայն։ Ընթերցողը թերեւս ճամբան երբեմն տրտնջէ բառից դժուարի մաց բարդութեանց և երբեմն անկապ իմաստից նկատմամբ։ Բայց թարգմանիչը առաջուց կ'իմացնէ թէ մտադիր է կարելի եղածին չափ անարատ պահել հեղինակի ոգին և հայերէն արմատ ունեցող բառերը, և թէ պիտի գտնենք անոնց մասին գրքին ետեւ գոհացուցիչ ծանօթութիւններ։

Իրբեւ նմոյշ մը մեր յարգելի թարգմանչին ըրած բառաքնութեանցը, հոս յիշենք վերլուծուած բառերէն մէկ քանին։ Ինչպէս պարսիկը չէ փորձած արդի լեզուի մէջ գործածել՝ այսպէս ալ հայու մտքէն չէր անցած որ մեր խոստովան բառը հին պարսկերէն ځټو ځټو բառի հետ նոյն ըլլայ, և մինչեւ հիմայ անարատ մնացած իմաստով և հնչմամբ։ Մեր աւելի (երկուշ, մոմտուր ու հոգ) բառը կը գտնուի կարնամակի բնագրին մէջ ځټو (էնտէջին) զոր Տ. Թիրեաքեան տիրաւոյ կը թարգմանէ։ Հետաքրքրական է երբ նոյն գտնենք Բաքկեն անունը փափաքի հետ, եւս առաւել երբ տեսնենք որ պահլաւերէն են անոնց ځټو և ځټټو (բարեկ, բարեկան) կամ (պապէք, պապէքան)։ Տեսաբան կամ դատաստան բառին՝ պարզ որոշ կը տեսնենք հին պարսկերէնի մէջ հայեւրէնաբար գործածութիւնը, և ځټو ځټو (դատաստան Բնչ է), և ځټو ځټو (վճիռն Բնչ է)։ Պահլաւերէնի իւրաքանչիւր տարից զանազան հնչմանց համար՝ Պ. Թիրեաքեան վճիռ բառը կը կարգայ նաեւ վճար, վճարք և վճար։ Ինչպէս՝ շտապ՝ ստեպ, ցազ արմատէն ցէզ, ցեզ, ցիթ, կիթ, կիթ, կեզ և այլն։

Ասկէ թիչ առաջ՝ փորթուգալ փաշա՝ եղիշէի քննադատութեան անխոնջ աշխատ

տութեամբ մատնանիշ կ'ընէր հայերէնը պահլաւերէնի մէջ։

Նէօլտէքէ գերմանացին եւս թարգմանած է Արտաշիր Բարական կարնամակի պատմութիւնը։ Սակայն, եւրոպացի թարգմանչին կարնամակը տեղ տեղ կը տարբերի Տորթր Թիրեաքեանին թարգմանութենէն, կամ սխալ հասկացողութեամբ և կամ իր բնագրի տարբերութեան պատճառաւ։ Հայեւրէն թարգմանութիւնը այդ պարագայից մէջ միշտ լաւագոյն կերպարանքով կը ներկայանայ քան գերմանը։

Տորթր. Թիրեաքեանի այս երկը՝ — կարեւոր մէկ էջը Հայերէնի ստուգաբանական բառարանին — դիւցազներգական դրուագի մը վայելքն եւս կ'ընծայէ։ Հայք ընդհանրապէս համամիտ չէին Սասանեանց՝ վրէժխնդիր ըլլալով Արշակունեաց պատուոյն։ Սակայն, յամենայն դէպս Արտաշիր Բարականի զոյցը չէր կարող շրջան մը կատարած ըլլալ Հայաստանի լեռներուն մէջ։ Արտաշիր հեծելագունդի փողերուն կը միանան երբեմն հեռուստ՝ հովիտներու մէջէն՝ հայ բանաստեղծներու քնարները և սրինգները հայ հովիտներուն։

*

ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԱՆԱՅ ԼԵՋՈՒԻՒ՝

գրեց

ԳՐ. ՎԱՆՑԵԱՆ

Մինչդեռ արեւմտեան հայերէնը՝ իրբեւ յղկուող աղամանդ մը՝ հետզհետէ նոր ճաճանչներ կը փողփողէ, և մատաղ տունկի մը նման կ'աճի զբարարի նեցուկին խա-

1. Տպագրուած է Թիֆլիս. տպ. Մ. Վարդանանի Գան. ֆ. N. 3. 1906։ Այս էր երկը կը բաժնուի քսան ուերկու երկայն գլուխներու և 242 էջեր կը բաղկանայ։

զապատուած, հեռուն՝ կովկասեան բարձունքներու մէջ՝ իրեն ախոյեան կանգնած է ուրիշ մատենագրութիւն մը, ուրիշ հայերէն մը որ հազիւ թիֆ դարուն սկիզբները՝ կովկասեան գաւառաբարբառներով կազմուած, և հաստատուած հոն՝ լեռներու մէջ, — հետեւաբար հեռու շփման և զարգացման պայմաններէն, — արդէն իսկ՝ շուտով հսկայացած մանուկի մը նման՝ կը ներկայանայ հզօր կուսակցութիւն մը՝ հակակշիռ արեւմտեանին:

Ո՛վ էղաւ կովկասեան հայերեկի հիմնադիրը. — Անանուն ամբողջն զատ՝ որ լեզուի մ'առաջին հեղինակն է միշտ՝ Ներսէս Աշտարակեցին:

« Արեւելեան լեզուն, և՛ քսէ վանքեան, Ներսիսեան զպրոցին շնորհի հաստատուեցաւ »:

Ուրիշ տեղ մը. մեր « լեզուն ուրեմն, լաւ քի վատ, ստեղծուեց Ներսիսեան զպրոցում »:

Արդ՝ իբրեւ յուշարար անցեալ դարու արեւելահայ գրական պատմութեան՝ Գր. վանքեանի Պատմական Քերականութիւնը յետ խօսելու ընդհանրապէս լեզուի ծագման վրայ, և գլխաւորապէս մի քանի գաւառաբարբառներու (արարատեանի, զօփերեկի, Ղարաբաղի), յետ երբեմն թեւածելու զբարբառին շուրջը, — զարաւոր բունը՝ ուսկից կը ճիւղաւորին գաւառաբարբառները, — կը ճոխանայ իննեւտասներորդ դարու կովկասահայ մատենագրութեան և անոր ներկայացուցիչներուն վրայ, որ դիւցազներն են իր պատմութեան. և ասոնց ոճին և լեզուին վրայ գաղափար մը տալու համար՝ այլեւայլ նմոյշներ ի մէջ կը բերէ:

Կը խօսի մանրամասն Ներսիսեան զբարբառի, Լազարեան ճեմարանի, Դորպատի վրայ. անոնց կրկնել տալով, ընթերցողին աչքին առաջ, իրենց՝ պատմութեան մէջ կատարած դերը:

Լեզուաբանականին հաւասար տեղ կը բռնէ՝ վանքեանի երկին մէջ՝ պատմական բաժինը, ըլլալով նոյնքան խնամուած և օգտաշահ:

Այս իր երկը, հայրենասիրական զգա-

ցումով ոգեկառ, ոչ միայն իբրեւ շարժանկարի (սինեւարոկրաֆ) տեսարաններ կ'անցընէ ընթերցողի առջևէն կովկասահայ մտքի յաղթանակները՝ այլ Պ. վանքեան միանգամայն իբրեւ անաչառ դատաւոր՝ համեմատութեան դնելով Պօլսահայ և կովկասահայ մատենագրութիւնը, չի վարանիր յափշտակուած նայուածք մ'ուղղել առաջնոյն և վերջնոյն ստորնութիւնը խոստովանելու, — եթէ ոչ ամէն մասի՝ գէթ ճաշակի մէջ:

« Մանաւանդ, և՛ քսէ, երբ մեր բունստերները մի քիչ փոխ տանեն արեւմտեան Հայերի հմտութիւնն ու ձաշակը՝ յետոյ մէք »:

Այս յայտնի է, իրացնէ, որ կովկասահայը չունեցան մինչեւ մեր օրերը՝ գրեթէ՝ լեզուին այն անոյշ ձեւերը, զարմուածքները, փափկութիւնները և նրբութիւնները, որով պօլսահայ բարբառը այնքան հրապուր ու շնորհք կը զգենու:

« Մի ուրիշ տարօրինակութիւն արեւելեան բարբառների այն է որ ձեւափոխութեան և զարգանալու յալստի ձգտումների հետ՝ զորք և երբայեան և կոկոսեան զգացումներից »:

Որոշ է դարձեալ որ զբարբառի ցանկապատէն դուրս ստեղծները առաջին անգամ ճահկահայը եղան, որոնց անմիջապէս շփուելով լատին ազգերու հետ, առին անոնցմէ զբական ճաշակը, գաղափարներու շնորհածեւ արդուզարդեր, վերջապէս ձեւեցին աշխարհաբար անոնց կաղապարին վրայ:

Ընդհակառակն կովկասահայը, աւելի ուշ իմացան « որ ժամանակ է քորսիկոյ գրաբարի ծանր ու կաշկանդի կոպերը » և ապա շփուելով գերման ցեղին հետ, ինչպէս դիտուած է յաճախ, ստացան անոնցմէ աշխատանքի տոկունութիւնը և քայքայ գերման լեզուն նշանաւոր չէ փափկութեամբ, ինչպէս իր զրագէտները՝ ճաշակով: Թուահայը ալ զրկուեցան անոնցմէ շատ տարիներ:

« Ի նկատի ունենալով նուազանքներն օրերը, մեր արեւմտեան լեզուն մի փափուկ ցածր և համեմատաբար արուց խօսելու, հետեւաբար սալօրի լեզուն է: Միւս արեւելեան

քորսք և կոպիտ խօսեցոյ, ուրեմն լեռնային լեզու է » :

Բայց Ռուսահայր ծանօթանալով արեւմտեան հայերէնի, ու նաեւ ուղղակի, ֆրանսական ձգիչ մատենագրութեան հետ, սկսան նորանալ նաեւ ճաշակի մէջ։ Այսպէս ուրեմն հայութեան երկու մեծ զանգուածները տարբեր ճամբաներու հետեւելով, յարեցան լատին և սլաւ կամ գերման ճիւղերու, ընականաբար առանց զերծ մնալու կլիմային անխուսափելի ազդեցութեանէն։

Ուրեմնտեան հայը, նախ և առաջ, դեռ բուն գրական գործին ձեռք չի զարկած, սկսան լեզուական օրէնքներ աւանդել և անոնց համեմատ հայացնել օտարազգի գրուի գործոցներ։

Կովկասահայր, ընդհակառակն, անմիջապէս և բուռն եռանդեամբ գործնականին մէջ մտան, գրաբարի կաշկանդիչ կապերէն ազատուելու համար, ինչպէս կ'ըսէ վանքեան։ Բարեբախտաբար շնորհիւ տաղանդաւոր անձինքներու չկասեցան ծանր գործը առաջ տաննելէ, և յաջողեցան հաստատուն ուղղութիւն մը տալու լեզուին և մատենագրութեան։

Պր. վանքեանի երկը շահեկան է ոչ միայն արեւելեան լեզուի, այլ և գրաբարի պատմութեամբ հետաքրքրուողներուն. նա կը ջանայ ցուցնել գրաբարէն ալ հին հայերէն մը՝ մեր արդի գաւառաբարբառներուն մէջ։ Այս խնդիրը կարեւոր է յոյժ և կ'արժէ իր փաստերը ի մէջ բերել։

Իմէ էր արդեօք չայերէնի վիճակը հիմուր. ունէ՞ր մա. արդեօք որ և է բարբար, հաստատ վկայութիւն չ'ուրիմը. — թէպէտ ընդհանուր լեզուաբանական օրէնքով և մերկայի ղեղակցիայով դա ամկասկածելի է թուում և զորիւմի խօսքերը գրեթէ հաստատում են այդ եզրակացութիւնը. «չրամսմ առեալ ի թագաւորէմ սկիզբմ առնեմ լոյ զնութագուգ կողմամսմ Կարաց, որք... վասմ խցցեկակայմ և խոչորագոյմ լեզուիմ դժուարաւ».

1. « Հանգէս Ամսօրեայ » 1899. N. 5. 1901 թ. N. 5. 6. « Նախահայերէնի հետքեր գտնուեալ » :

2. Զէթ պահած է Ղարաբաղի բարբառում, քիմթթ — Թիֆլիզի բարբառում։

մատոյցը էիմ ... առեալ պարզախօսս, հոստո. րաբամս կրթեալս ... կացուցամէիմ ... » :

Այդպիսի բարբառների գոյութիւնը որքան ամկասկած, մոյթքամ էլ ցաւալի է, որ ոչիմն չէ հասած հիմութիւնից մեր ձեռք գրական լեզուից դուրս, որ մի գաղափար տար ժամանակակից ո՛ր և է լարբարի մասիմ. Ներկայ բարբառներում էլ իմչպէս հմտօրէն ցոյց է տուել Այտրեանմ իր քերականութեամ մէջ չկայ մի ձեւ, որ իր սկիզբը չուենմար գրաբարում։

Հայ բարբառների մորագոյմ ուսոյթմերը սա. կայմ ցոյց տուին, որ այդ կարծիքը լիովն ճիշտ է։ Առաջիմ ամգամ մենք մատմամիչ արիմք մի այդպիսի երեւոյթ գտնուեմում, որ չէր կարող գրաբարից իյած լիմել։

Այսպէս՝ յայտնի է, որ գրաբարի այ երկրարբառը կենդանի բարբառներում երեւամ է գալիս ա. է, կամ ի ձեւով. աշ—առ, էս, էսիկ, իսիկ. գալլ, գաւ, գէւ, (գէւու). ալլ, աւ, էւ. ալլ, աււ. հայր, հար, հէր, և այլմ։

Զօկերէմ այդ կամոնիմ չի՞ եմթարկուել և պալանել է գրաբարի ամբարտոնութեամբ. ինչպէս օր. մայր, հայր, և այլմ ... իսկ մի շարք այլ բառերում մոյմ իսկ գրաբարի կարմ և ամփոփ ձեւը մրամում լայմացել, երկարացել է. տէր — գօկերէմ տայր, միս — մայս, սպիտակ — սպայտակ, սիրել — սայրել, և այլմ։

Եմթարելի թէ գօկերէմը միւս բարբառներիմ հակառակ գարգացմամ ըմթար է ունցել՝ ամկարելի է, որովհետեւ մրա մմացեալ տարբերում ամփոփմամ կամոնը կատարելապէս պահպանել է իր զօրութիւնը, այմ էլ շատ ազուր կերպով. գմալ — դարծել է աւ լեզուի գարգացմամ ըմթացքի համեմատ, այմ ինչ քիթ — դարծել է թայթ, մոյմ ըմթացքիմ հակառակ։

Ո՛րմ է սրամցից հիմը, քէթ — հիմ ձեւից չէր կարող դուրս գալ թայթ. ըմթակառակը քայմթ ձեւից — քամթ, քէմթ — քէթ, քիմթ² և քիթ ա. մենայմ դիւրութեամբ. Ուրեմն գօկերէմն աւելի հիմ է քամ գրաբարը։

Որպէս զի մեր ասածն առանց տարակոյսի հաստատել կարեանմք, հարկաւոր է մաեւ գրաբարի վկայութիւնը. Տէր բառը գրաբարում գարտուղի հոլովում ունի. Տէ—առն, ի տե—առնէ, տե—արք և այլմ. Այս հոլովներից երեւում է, որ սա մի պարզ բառ չէ, այլ կազմուած է տե կամ տի, մասնիկից և այր (առն — արք) բառից, ինչպէս տի—կիմ, տի—գեղեց բառերը³. Արդ՝ այս հոլովներից պարզ է եզրակացնել, ո՞ր տէր—ի մաեւ. մակամ ձեւը պիտի լիմէր տէայր կամ տայր. Զօ.

3. Տի մասնիկն ինչպէս երեւում է, նշանակում էր մեն, զօրաւոր, տի—կին — մեն կին — իշխանուհի — Թագուհի, տիայր — մեն — մարդ, իշխան — տէր, տի—կեղեց — մեն եղբայր, անեղբայր։

կերէնում հէնց այսօր էլ պահուած է այս վերջիմ ամարատ, որից ամփոփուելով ժազել է մութագոյն գրաքար ձեւը՝ աայր — տար — տէր — : Այս ձեւի հնուիթիւնը զօկերէնում ենթադրութիւն չէ, այլ հէնց գրաքարից վկայուած մի իրողութիւն. Այդ վկայութիւնն աւելի ամրաճում է մրաւնով, որ Ղարաբաղի և թիֆլիզի բարբառներն էլ, պահել են այդ ձեւերի միջին աստիճանը :
Օրինակ.

1) Զօկ.	2) Ղարաբաղ.	3) Գրաքար.
տայկ	տէկ	տիկ
մայս	մէս	միս
(սայրս) սարտ	սէրտ	սիրտ
մայտք	մէտք	միտք
ծայծ	ծէծ	ծիծ
կմայկ	կծէգ	կծիկ ¹
կծայկ	կծէկ	կծիկ ²
քայթթ, քիթթ (թիֆլ.)	քէթ	քիթ

Այսպէս հին են. մայրուք — միրուք (չըզրում) — մօրուք, մայքիմ — միջիմ. (ուրեմ մէջ — մայջ) հայծգ — հիծգ. մտայք — մտիկ, կոայ — կոիւ. պղայծ — պղիծ, պայտք — պէտք, սպայտակ — սպիտակ, թայք — թի, հայք — հիծ. և այլն.

Այստեղից ծագող հնդկականութիւնները խիստ հարցադրական են. մենք տեսնում ենք, որ գրաքար և մեր մնացեալ բարբառների է և ի հաւմապատասխանում են մախահայերէն ալ հրեարբառիմ. օր. զաւառակամ խիթ — խիթիւ, եմթաղորւմ է մի մախորդ որ է, ի հնչիւնների տեղ ալ պիտի ունենար, խայթխայթիւ. իրօք, այդ բառերը պահուած են գրաքարում իրանց մախիմի մշտականութեամբ :

Գրաքարի տէրք-տեսանք ծագում է աայր բառից, իսկ տէրէ, ամտարակոյս ենթադրում է մի աայրէ մախորդ, որմ աւելի ամփոփ գտնում ենք զաւառակամ տարիլ (տարեցի, *grecner-greco* չըզրումի քարքաւ) քայի մէջ. ձօկերէնի սարբ, հարկալ ենթադրում է մի աայր գոյակամ, որից կլած է «սէր», ծայծ-ծիծ-ծծէկ, ենթադրում է և մի մախորդ «սէր» ծայծիլ :

Գրաք. կիմ—պէտք է լինէր կայն, որ երեւում է յոգմակի — կամայք ձեւից :

Գր. վանցեանի հետ կը շրջինք ո՛չ միայն մերձաւոր անցեալին, այլ և խորաւ գոյն հնութեան մէջ. իր գիրքը կրթութիւն մ'է և զբօսանք. հաճոյական է ինչպէս դաւարագեղ դաշտի մը մէջ հնախօսական պեղում մը :

1. 2. Այս երկու բառերից էլ երևում է, որ իկ և ակ փաղաքական մասնիկը մի և նոյն ծագումն ունին և նախնի այլ մասնիկի ամփոփումն են :

ԱՇՈՒՇԱՅԻ ԿՆԻՔԸ

առ չամդէս Ամսօրեայ

Կը գրէք. « Առաջին անգամ, որչափ ծանօթ է մեզ, Հ. Բ. Գաթրեանի Նկատի առաւ կնիքս իւր Տիեզ. Պատմութեան մէջ » :

Մենապատիւ Նորայր դիտել կու տայ որ Գաթրեան, նը չէ, այլ Վենետիկ Միքիթարեան շարք, որ առաջին անգամ է Նկատի առած են սոյն կնիքը խորհնացոյ Է. տալերէն Բարգմանութեան մէջ՝ տպուած 1841ին. «Storia di Mosè Corenense» versione italiana illustrata» Venezia, tipografia armena S. Lazzaro, 1850.

« Nell'arm. è Petiask Cucratsuotz o Carcaratsuotz. Godiamo osservare che questo titolo si vede chiaro sull'onice bellissimo a doppia foglia, che conservasi nel gabinetto nazionale a Parigi, di cui rechiamo la copia tratta dal Visconti: ΟΥΣΑΣ ΠΗΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΩΝ. Veggasi *Iconographie grecque*, II, pag. 366 dell'ediz. di Milano. Per Pittasse degli Iberi e Carchedi deesi intendere principe armeno governatore dell'Iberia e de' Cuccaresi. Quanto al nome *Usas* (meglio nel caso retto *Usa*), noi tenghiamo per certo ch'egli è il celebre *Asusà* (in arm. *Asciuscia*) principe di que' paesi nel V secolo, e di cui parla il nostro nel III a c. LX. L'*Usas* dunque di questa iscrizione, che tanto diede a pensare agli archeologi italiani, francesi e tedeschi, non è che la metà del caso genetico del nome armeno *Asusa*; poichè già anche sull'onice c'è assai spazio per la sillaba *AS* ».

Գաւով այն զաղաքաբնիկուն զորս յօղուածագիրը կը յայտնէ չամդէս Ամսօրեայի մէջ մեր առաջարկած մեկնութեան դէմ, կը պատասխանուի առանձին յօդուաւ. ծով մը, զոր տեղադր անձկութեան պատճառաւ կը քուշուք յաշորդ ամսոյն :

ԻՄԲ.

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

ԼՈՅՍ

Պատի օրացոյցը՝ գունաւոր պատկերազարդ տպագրութեամբ և բուրբուկին նոր բովանդակութեամբ :

Գրիմ. Mr. E. Toptchian, Tiflis (Caucase) Matdatsowskaya, 5.